Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով փաստացի ծախսը կազմել է 20,209.0 հազար դրամ՝ նախատեսված 28,264.1 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել խմելու ջուր, մեկանգամյա օգտագործման բաժակներ, տնտեսական ապրանքներ:

Հատուկ նպատակային այլ նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 14,309.2 հազար դրամ՝ նախատեսված (6շտված) 27,107.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 52.8% և ներառում է տոնական և հիշատակի օրերի, ինչպես նաև այլ միջոցառումների համար նախատեսված մեդալների, ծաղկեպսակների և

ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերման և COVID-19 համաճարակով պայմանավորված ախտահանիչ նյութերի, դիմակների ձեռք բերման ծախսերը:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հողվածով փաստացի կատարողականը կազմել է 287,532.3 հազար դրամ, նախատեսված (ճշտված) 287,532.3 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 100.0%: Այն իրենից ներկայացնում է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերի ձեռքբերումը, ընթացիկ այլ աշխատանքներ:

Այլ նպաստներ բյուջեից հողվածով փաստացի կատարողականը կազմել է 44,268.0 հազար դրամ՝ նախատեսված 53,170.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում «Երևան քաղաքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 27-ի N 28-Ա և 2021 թվականի հոկտեմբերի 26-ի 454-Ա որոշումներով սահմանված կարգով կատարված ծախսերի դիմաց փոխհատուցում է վճարվել Երևան քաղաքի ավագանու անդամներին:

Ընթացիկ դրամաշնորհներ պետական առևտրային կազմակերպություններին հողվածով ծախսը կազմել է 27,813,7 հազար դրամ նախատեսված 30,507.3 հազար դրամի դիմաց՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին չորս ուղղություններով կազմակերպելու համար:

Պարտադիր վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 2,713.1 հազար դրամ՝ նախատեսված 9,235.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել և իրականացվել են քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված մեքենաների տեխնիկական զննման և տուրքերի վճարման ծախսերը:

Այլ ծախսեր հողվածով նախատեսված 7,202.0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

Վարչական սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 137,225.2 հազար դրամ՝ նախատեսված 194,001.8 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 70.7%, ինչը 55,020.1 հազար դրամով ավել է 2021 թվականի նույն ցուցանիշից: Այն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված

ստորաբաժանումներում անհրաժեշտ գույքի ձեռք բերմանը, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի գույքի և տեխնիկայի (այդ թվում՝ համակարգչային) փոխարինմանը:

Այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածով նախատեսված 211,028.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 53,410.3 հազար դրամ, որը ուղղվել է աշխատակազմի ստորաբաժանումներում անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերմանը: 14,100.0 հազար դրամով ձեռք է բերվել մատնահետք կարդացող սարք, 19,940.5 հազար դրամով իրականացվել է ցանցի արդիականացում, ձեռք են բերվել խոսափողների-բարձրախոսների հավաքածու, չափման և հսկողության սարքեր, արխիվային դարակաշարեր, ծխատար կաթսաների օժանդակ սարքեր, կրակմարիչներ:

Ոչ նյութական հիմնական միջոցներ հոդվածով փաստացի ծախսը կազմել է 35,000.0 հազար դրամ՝ նախատեսված 53,500.0 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում իրականացվել է տվյալների անվտանգության և հակավիրուսային համակարգչային փաթեթների ձեռքբերում, Երևան քաղաքի բյուջեի մշակման համակարգչային ծրագրի արդիականացում, լրամշակում:

**2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 285,675.6 հազար դրամ նախորդ տարվա ծախսից 213,450.5 հազար դրամով ավելի՝ նախատեսված 538,009.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 53.1%: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևանի քաղաքապետարանի Արգիշտի 1 վարչական շենքի 4 հարկի աշխատասենյակների, 1-08 ծառայության հարևանությամբ գտնվող փոքր դահլիճի վերանորոգման, Բյուզանդի 1/3 հասցեի շենքի տանիքի մասնակի նորոգման, 6-րդ հարկի և տեխնիկական հարկի նորոգման և արխիվի կազմակերպման աշխատանքներ, Աջափնյակ վարչական շենքի ջեռուցման համակարգի վերանորոգման, Արաբկիր վարչական շենքի առաջին հարկի, Նոր Նորք վարչական շենքի կաթսայատան արտաքին ջրամատակարարման ցանցի հիմնանորոգման, Շենգավիթ վարչական շենքի նախասրահի կոնֆերանս սրահի ընթացիկ նորոգման, Դավթաշեն 1-4 հարկերի, Քանաքեռ-Զեյթուն, Էրեբունի վարչական շենքերի ընթացիկ վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ: 20,000.0 հազար դրամով Բյուզանդի 1/3 հասցեում ձեռք են բերվել և տեղադրվել թվով 2 վերելակ:

2. **Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծրագրով** նախատեսված 14,000.0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել: Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը Երևան քաղաքին շնորհվել է երկարաժամկետ «B+» վարկանիշը՝ «Դրական» կանխատեսմամբ, սակայն 2022 թվականին հաշիվ չի ներկայացրել վճարման համար:

3. **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 53,114.6 հազար դրամ՝ նախատեսված 57,412.2 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 92.5%: Այս ծրագրով բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից որպես պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորություններ:

4. **Նախագծային աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 683,941.8 հազար դրամ՝ նախատեսված 886,309.1 հազար դրամի դիմաց, ինչպես նաև 2021 թվականի փաստացի ցուցանիշից 588,533.5 հազար դրամով ավելի: Նշված գումարի շրջանակներում ձեռք են բերվել ինչպես Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեով, այնպես էլ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեով նախատեսված որոշ կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը: 545,000.0 հազար դրամը վճարվել է Աջափնյակ թաղամասի մետրոպոլիտենի կայարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման 1-ին փուլի մեկնարկային հաշվետվության նպատակով:

5. **Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտում** ծրագրով հաստատված 90,000.0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

6. **Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում** ծրագրով նախատեսված 50,000.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 57.6%՝ 28,800.0 հազար դրամ, որով կատարվել են Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագծի մշակման քաղաքաշինական աշխատանքներ:

7. **Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարներ և գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության**

**տրամադրման հետ կապված վճարումներ** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 104,648.0 հազար դրամ՝ նախատեսված 141,530.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 73.9%: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են դատարան դիմելու պետական տուրքերի, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գրանցման և գնահատման հետ կապված ծախսերը:

**8. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 139,637.5 հազար դրամ՝ նախատեսված 169,348.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 82.5%, որոնց շրջանակներում վառելիքով, տրանսպորտային միջոցներով և գրասենյակային նյութերով աջակցություն է ցուցաբերվել Երևան քաղաքի տարածքային զինկոմիսարիատներին և քաղաքացիական պաշտպանության կառույցներին: 702.5 հազար դրամով իրականացվել է էլեկտրաշահակների վերանորոգման և ընթացիկ սպասարկման աշխատանքներ, 63,462.0 հազար դրամ գումարով իրականացվել է Երևան քաղաքում գոյություն ունեցող թվով 91 հակահրդեհային հիդրանտների հիմնանորոգման և 6 նորերի կառուցման աշխատանքներ, ձեռք են բերվել և տեղադրվել թվով 218 ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկ: 22,260.0 հազար դրամով ձեռք է բերվել թվով 53 եռաֆազ և միաֆազ էլեկտրաշահակ:

**9. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,870.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 9,870.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%: Ծրագրով իրականացվել է հաշվետու տարվա ընթացքում զորակոչի արդյունքում Երևանի ենթակայության կազմակերպություններում՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն», «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» և «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին կատարվող վճարումները:

**10. Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն** ծրագրով նախատեսված 15,000.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 10,943.0 հազար դրամ՝ 73.0%:

Ծրագրով թվով 34 իրավախախտ շրջիկ առևտրի կետերը և տրանսպորտային միջոցները տեղափոխվել են հատուկ տարածք:

**11. Ինքնակամ տեղադրված առևտրի ծառայությունների մատուցման օբյեկտների ապամոնտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ** ծրագրով իրականացվել է 10,500.0 հազար դրամի ծախս՝ նախատեսվածի չափով, իրականացվել է շուրջ 70 ինքնակամ տեղադրված օբյեկտների ապամոնտաժման և տեղափոխման ծառայություն:

**12. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 130,292.4 հազար դրամ նախորդ տարվա համեմատ 123,906.9 հազարով ավելի՝ նախատեսված 201,551.0 հազար դրամի դիմաց: Ծրագրի կատարողականը կազմել է 64.6% և իրականացվել են Արագածի փողոցի 93, 93ա շենքերի ոռոգման նպատակով խորքային հորի կառուցման, Մարգարյան փողոցից Բեկնազարյան փողոց ընկած հատվածի ոռոգման ցանցի, Ա. Խաչատրյան փողոցի ոռոգման համակարգի կառուցման և Զովունի խճուղու հարակից տարածքի ոռոգման ցանցի վերանորոգման աշխատանքներ:

**13. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության ծրագիր» և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության Ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության դրամաշնորհային ծրագիր և Երևանի էներգաարդյունավետության ծրագրի համաֆինանսավորում** ծրագրերով իրականացվել է 1,733,512.6 հազար դրամի ծախս նախատեսված 2,887,621.4 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են սկսվել և իրականացվել Երևանի թվով 14 մանկապարտեզներում: Նշված գումարից 9,493.4 հազար դրամն ուղղվել է ստացված վարկի տոկոսավճարի մարմանը, իսկ 406,716.4 հազար դրամ գումարը տրամադրվել է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից որպես կապիտալ սուբվենցիա՝ ԱԱՀ-ի վճարման համար:

**14. Եվրոպական միությունը «Երևանի արևային համայնքի համար» դրամաշնորհային ծրագիր և Եվրոպական միությունը «Երևանի արևային համայնքի համար» ծրագրի համաֆինանսավորում** ծրագրերով կատարված ծախսը կազմում է 241,521.2 հազար դրամ 2021թ. համապատասխան ցուցանիշից 115,677.9 հազար դրամով

ավելի՝ նախատեսված 343,570.7 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 70.3%: Ծրագրի շրջանակներում շուրջ 63 շենքերում իրականացվել են շենքերի ներքին և արտաքին տարածքների լուսավորման համակարգերի տեղադրման աշխատանքներ, թվով 54 բազմաբնակարան շենքերի հարթ տանիքներին տեղադրվել են արևային ֆոտովոլտային կայաններ, ինչպես նաև «ԵՄ-ն Երևանի համար արևային համայնք» ծրագրի տեսանելիության և իրազեկվածության բարձրացման նպատակով ծրագրի վերաբերյալ տեսահոլովակի և անհիմացիոն հոլովակի պատրաստում, կայուն էներգիայի շաբաթ միջոցառման շրջանակում էքսպո-ցուցահանդեսի և երկօրյա ուսուցողական սեմինարների կազմակերպում:

**15. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում** ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 3,115,940.5 հազար դրամ՝ նախատեսված 3,205,299.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 97.2%, ինչը պակաս է 2021 թվականի համապատասխան ցուցանիշից 432,328.3 հազար դրամով, ինչի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների փողոցներում, մայրերում և բակային տարածքներում իրականացվել են շուրջ 1,269.7 հազար քառակուսի մետր մակերեսով ասֆալտ-բետոնյա ծածկի նորոգման և ճաքալցման աշխատանքներ և թվով 364 դիտահորերի ընթացիկ նորոգման աշխատանքներ, թվով 770 թուջե կափարիչների փոփոխման, ծածկի սալի նիշերի 11, և թվով 12 անձրևորսիչների ուղղման աշխատանքներ:

**16. Ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 98,900.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 150,000.0 հազար դրամի դիմաց: Իրականացվել են 12624.0քմ փողոցների հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

**17. Եզրաքարերի վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 194,432.7 հազար դրամ՝ նախատեսված 239,316.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 81.2%, որով բոլոր վարչական շրջաններում իրականացվել են շուրջ 16,676.1 գծմ եզրաքարերի ընթացիկ նորոգման, ինչպես նաև փողոցների հին եզրաքարերի փոխարինման աշխատանքներ: Աշխատանքներ են իրականացվել Նուբարաշեն վարչական շրջանի 10, 14 փողոցներում, 2 թաղամասում, Նորագավիթ 1-ին փ. Ֆրունզե 8, Գ. Նժդեհի փողոց Բագրատունյաց 1 նրբ 11 շենքի հարակից, Արարատյան



62/1, Թադևոսյան 10, Մարգարյան, Հալաբյան, Նազարբեկյան, Մազմանյան փողոցներում, 16թ. 45շենքի մոտ, Շինարարներից Հալաբյան տանող անանուն փողոցում, Օհանովի փողոցից դեպի Անդրանիկի 24,25 շենքեր, Բ-2 թաղ. N140 շ-ից դեպի N82 մանկապարտեզ տանող ճանապարհի, Բաբաջանյան փողոցից դեպի հիվանդանոց (Յ.Բախշյանի այգու դիմաց), Բաբաջանյան փողոցից դեպի Ավետիսյան կրթահամալիր տանող ճանապարհի, N176 դպրոցի աջակողմյան հատվածի, Օհանով և Շերամ փողոցների խաչմերուկի, Անդրանիկի փողոց N25 շենքի մուտքային մասի, Անդրանիկի փողոց N15 շենքի մուտքային մասի, Ծարավ-Աղբյուր 55/6, Խուոյակով 222, Խուոյակով փողոցի, ինչպես նաև Ավան-Առինջ 2մկշ. 2/4շ. բակային տարածքներում:

**18. Հենապատերի վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 81,061.7 հազար դրամ՝ նախատեսված 138,908.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 58.4%: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են մասնագիտական ուսումնասիրության արդյունքում առաջնահերթ և հրատապ հիմնանորոգման ենթակա հենապատեր՝ թվով 39 հասցեներում, մասնավորապես Ավան-Առինջ 1-ին մկշ. 2/3, 2/12 շենքերի հարակից հենապատի, Ալմա Աթա -մարշալ Խուոյակովի խաչմերուկի, Դուրյան 30, Թումանյան 7/1, Ավան-Առինջ 2-րդ մկշ 2/5, 2/6, 1/12, 2/10, Դուրյան 37, 48, Ավան 4-րդ փողոցի հենապատերի, Վրթ. Փափազյան և Վարշավյան փողոցների խաչմերուկի, Բ-2 թաղամասից դեպի Մ. Մելքոնյանի անվան N11 դպրոց տանող մայթեզրի, Ն. Զարյան փողոցից դեպի Հ. Մուրադյան 42/2 տանող ճանապարհի, Ֆուչիկ, Նազարբեկյան փողոցների, Մոսկովյան նրբանցքի Թումանյան տուն-թանգարանի մոտ, Թաիրով փողոց դպրոցի դիմացի հենապատի, ինչպես նաև Շիրակի 66 շենքի բակի, Գ. Նժդեհի հրապարակի, Չարբախ մետրոյի կայարանի, թիվ 122 և թիվ 123 մանկապարտեզների պարիսպների, Նաիրի հյուրանոցից դեպի Հին Նորք տանող ճանապարհահատվածի պարսպի և Նուբարաշեն վարչական շրջանի 6 և 9 փողոցների հենապատերի հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

**19. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 234,340.6 հազար դրամ՝ նախատեսված 301,032.2 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում կատարվել են Բ. Մուրադյան, Ստեփանյան, Սաֆարյան փողոցների և Գայի պողոտայի հետիոտնային անցումների, Բաղրամյան 41շենքից Այգեձոր 22 շենք

տանող հետիոտնային անցման հիմնանորոգման, Հանրապետության հրապարակի մետրոյի կայարանի վերգետնյա հատվածի քարե շինության վերանորոգման, Ազատության պողոտա-Դավիթ Անհաղթ փողոցի խաչմերուկի ստորգետնյա հետիոտնային անցման հիմնանորոգման, Բագրատունյաց փողոցի Երևան Սիթի հանրախանութի մոտ վերգետնյա հետիոտնային անցման ապամոնտաժման աշխատանքներ, սկսվել են Փակ շուկայի դիմացի ստորգետնյա հետիոտնային անցման հիմնանորոգման աշխատանքները:

**20. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 77,631.6 հազար դրամ՝ նախատեսված 150,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 44 կամուրջների, էստակադաների, հետիոտն վերգետնյա անցումների, ուղեանցերի, տրանսպորտային հանգույցների և ուղետարերի նորոգման, շահագործման ու պահպանման աշխատանքները:

**21. Հրազդանի կիրճի և Երևանյան լճի բարեկարգում** ծրագրով նախատեսված 2,000.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1.199.9 հազար դրամ, կամ 60%, ինչի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից տարածքի մաքրման, բարեկարգման և Հրազդան գետի մաքրման աշխատանքներ:

**22. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 642,410.2 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 717,083.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 89.6%, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի փողոցների ճանապարհի նոր մայրերի կառուցման, ինչպես նաև Երևան քաղաքի փողոցների մայրերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքներ, մասնավորապես՝ Խուդյակով փող. մայթ, Բ-2 թաղամասից դեպի Մ. Մելքոնյանի անվան N11 դպրոց տանող մայթեզր, N79 մանկապարտեզի բակային տարածք, Սվաճյան 38 շենքի բակային տարածք, Րաֆֆու փողոցի հետիոտնային անցումներ, Տիգրան Մեծի պողոտա 71, Սասունցի Դավթի հրապարակ Ազատամարտիկների այգի, Կոմիտաս պողոտայից Արամ Խաչատրյան առաջին նրբանցք մայթի նորոգում, Հալաբյան, Նազարբեկյան, 16թաղամասի 452. բետոնե մայրերի սալիկների տեղադրում, Պոռչյան փողոց 1-ին նրբանցքից Դեղատան փողոց, Չարենցի փողոցից Չարենցի փողոց 2-րդ նրբանցք մինչև Ֆիզկուլտուրնիկների փողոց,

Դեմիրճյան փողոցից մինչև Սարյան փողոց, Արամի փ.-ից մինչև Պուշկին փողոց, Մաշտոցի պողոտայից մինչև Սարյան փողոց, Բուզանդ փ./Աբովյանից դեպի Քոչինյան/ հասցեներում, Բելինսկու անվան 38 դպրոցի դիմացի մայթ, Գ.Նժդեհի փողոց, Գայի արձանի տարածքի սալապատում, Նուբարաշեն վարչական շրջանի 9 և 13-րդ փողոցների մայթերի հիմնանորոգում, Աճառյան փողոցից մինչև Ծարավ Աղբյուր նորակառույց շենքի մայթի կառուցում, Հանրապետության հրապարակի մայթերի սալիկներ հիմնանորոգում, Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան փողոցները միացնող ճանապարհահատվածի կառուցում:

**23. Փողոցների պահպանում և շահագործում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 87,657.6 հազար դրամ՝ նախատեսված 96,033.6 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 91.3 %, որի շրջանակներում իրականացվել են Արշակունյաց պողոտա-Արտաշատի խճուղի և Բաբաջանյան-Դավթաշեն-Արտաշատի խճուղի ճանապարհի սպասարկման աշխատանքներ, Երևան քաղաքի Աթենքի փողոցի քարաթափումների կանխարգելման աշխատանքներ, Հանրապետության հրապարակի մետրոյի կայարանի վերգետնյա հատվածի քարե շինության կապիտալ նորոգում, իրականացվել են թվով 10 դիտահորերի ծածկի սալի տեղադրում, 22 դիտահորերի նորոգում, վնասված քայքայված 4 դիտահորերի նորոգում, շուրջ 770 թուջե կափարիչների ուղղման և նոր կափարիչների տեղադրման աշխատանքներ, ինչպես նաև ցանկապատերի, ճաղաշարերի ուղղման և ներկման աշխատանքներ:

**24. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություններ ծրագրով** փաստացի ծախսը կազմում է 416,661.7 հազար դրամ նախատեսված (ճշտված) 416,661.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%: Ծրագրի շրջանակներում 56,661.7 հազար դրամ գումար տրամադրվել է «Երևանտրանս» ՓԲԸ-ին որպես սուբսիդիա՝ Ազատության պողոտայի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար, իսկ 360,000.0 հազար դրամը՝ «Փարքինգ Սիթի սերվիս» ՓԲԸ-ին Երևան քաղաքում ավտոկայանատեղիի կազմակերպման համար:

**25. Թերահարթակների կառուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,884.3 հազար դրամ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 1,972.5 հազար դրամով ավելի՝ նախատեսված 19,404.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը

կազմել է 35.5%, որի շրջանակներում Երևան քաղաքի Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջանների փողոցների խաչմերուկների մայթերում և բազմաբնակարան շենքերի մուտքերում կառուցվել են թեքահարթակներ:

**26. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 424,417.2 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 490,979.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 86.4%: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողություն, ծրագրի ֆինանսական աուդիտ, SS սպասարկում: Ծրագրի չկատարումը պայմանավորված է արտարժույթային փոխարժեքի տարբերությամբ և խորհրդատուի կողմից ներկայացվող հաշվետվության հետաձգմամբ 2023թ.:

**27. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 290,368.6 հազար դրամ՝ նախատեսված 535,007.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 54.3%, որից 25,358.4 հազար դրամով իրականացվել է այգիներին մատակարարված էլեկտրաէներգիայի վճարումը, 9,683.8 հազար դրամով իրականացվել են վնասված նստարանների, աղբամանների, անվճար հայտարարությունների տախտակների ընթացիկ նորոգման աշխատանքներ, թվով 100 աղբամաններ և 50 նստարաններ ենթարկվել են ամբողջական նորոգման, նորոգվել է Ալ. Սպենդիարյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հարակից տարածքի ցանկապատը: Իրականացվել են Նոր Նորք վարչական շրջանի փողոցների հենասյուների մաքրման և ներկման աշխատանքներ, 253,614.2 հազար դրամով ձեռք են բերվել և տեղադրվել մետաղական ճաղավանդակներ, հասարակական տրանսպորտի կանգառասրահներ, հեծանիվների համար նախատեսված կայանատեղիներ (կախովի հարմարանքներ իրերի դասավորման համար), հետիոտնային և տրանսպորտային կանչի լուսացույցային համակարգեր, տեղեկատվական լուսային ազդանշաններ, ինչպես նաև լուսային ազդանշանի կանգնակներ: Նոր Նորք վարչական շրջանում տեղադրվել են ԼԵԴ

լուսատուներ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև հետիոտնային կանչի ռեժիմով աշխատող լուսացույցային համակարգերի սպասարկում:

**28. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում (պատվիրակված լիազորություններ)** նախատեսված 700,928.6 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմում է 657,687.3 հազար դրամ, կամ 93.8%: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 10սմ և 15 սմ-ոց հորիզոնական և ուղղաձիգ գծանշումներ, շուրջ 3600 գծմ սառը և թերմո պլաստիկով գծանշումներ, տեղադրվել են թվով 113 լուսացույցային կոնսուլ հենասյուներ, հեռակառավարվող ազդանշանային սարքեր և լուսային ազդանշաններ, ճանապարհային նշանների սյուներ/կանգնակներ/, տեղադրվել են շուրջ 5130 ճանապարհային նշաններ՝ մասնավորապես եռանկյունի, կլոր, քառակուսի, տեղեկատվության և այլն, լուսային փարոսիկներ, փոխարինվել են փարոսիկների փայլաթերթեր, ներկվել են ճանապարհային նշանների սյուներ:

**29. Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի շարժակազմերի ներդրման ֆինանսական աջակցության ծրագիր և Երևելյան Եվրոպայի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)** ծրագրերով 2,760,850.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 2,104,999.3 հազար դրամ, կամ 76.2%, որի շրջանակներում ձեռք են բերվել թվով 87 MAN մակնիշի 12 մետրանոց ավտոբուսներ, տարբերություն գումարը կվճարվի 2023թվականին՝ ավտոբուսների ամբողջ խմբաքանակը ժամանելուց հետո:

**30. Տրանսպորտային համակարգի արդիականացում** ծրագրով նախատեսված 9,045,642.1 հազար դրամի դիմաց կատարվել է 2,614,747.5 հազար դրամի ծախս: Նշված ծրագրի շրջանակներում թվով 150 ավտոբուսների, և 15 տրոլեյբուսների ձեռքբերման նպատակով կնքվել են պայմանագրեր YUTONG BUS CO LTD և ZHONGTONG BUS HOLDING CO LTD ընկերությունների հետ՝ ընդհանուր 8,715,824.9 հազար դրամի, կատարվել են պայմանագրով նախատեսված կանխավճարային գումարների հատկացումներ, իսկ

տարբերություն 6,101,077.4 հազար դրամ գումարը կվճարվի 2023թվականին՝ ձեռքբերված տրանսպորտային միջոցները ժամանելուց հետո:

**31. «Երևանտրանս» ՓԲԸ-ի տարածքի բարեկարգում** ծրագրով նախատեսված 72,051.0 հազար դրամի դիմաց փաստացի 61,729.0 հազար դրամով իրականացվել են «Երևանտրանս» ՓԲԸ-ի տարածքի փակ ավտովագման կետի և տեխնիկական սպասարկման արհեստանոցի կառուցման աշխատանքներ:

**32. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ** ծրագրով իրականացվել է 127,237.4 հազար դրամի ծախս նախատեսված 132,048.5 հազար դրամի դիմաց, կամ ծրագիրը կատարվել է 96.4%-ով, որի դիմաց իրականացվել է հանրային գերակա շահ ճանաչված գույքի օտարման դիմաց փոխհատուցում:

**33. Վերելակների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,749,813.3 հազար դրամ՝ նախատեսված 4,787,017.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.2%, որի շրջանակներում 4,670,000.0 հազար դրամով ձեռք են բերվել և տեղադրվել շուրջ 467 նոր վերելակ, իսկ 79,513.3 հազար դրամով թվով 9 վարչական շրջաններում իրականացվել են վերելակների ընթացիկ նորոգման, դետալների փոփոխման աշխատանքներ: 300,0 հազար դրամով իրականացվել է Արաբկիր վարչական շրջանի վերելակների փորձաքննություն:

**34. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,720,445.5 հազար դրամ՝ նախատեսված 2,866,531.4 հազար դրամ գումարի դիմաց, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

**35. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 628,315.6 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

**36. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ, ինչպես նաև Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագրերով (պատվիրակված լիազորություններ)** ծրագրերով իրականացվել է 105,190.4 հազար դրամի ծախս՝ նախատեսված 291,521.4 հազար դրամի դիմաց

**37. Խողովակաշարերի կառուցում և վերակառուցում** ծրագրով նախատեսված 34,500.0 հազար դրամի դիմաց փաստացի իրականացված 31,829.4 հազար դրամով իրականացվել են Նուբարաշեն վարչական շրջանի Մասիս Ա Այգետարածքային հարակից տարածքի ջրագծի արտաքին ցանցի հիմնանորոգման աշխատանքներ:

**38. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով նախատեսված 306,031.4 հազար դրամ գումարի դիմաց փաստացի ծախսը կազմում է 305,181.6 հազար դրամ:

**39. Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների նորոգում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով 150,288.4 հազար դրամ նախատեսված գումարի շրջանակներում իրականացվել է 49,628.5 հազար դրամի ծախս, կամ կատարողականը կազմել է 33.0%, որի շրջանակներում Երևանի մետրոպոլիտենի համար ձեռք են բերվել սոնի, շփակցող մեխանիզմ, գայլիկոն, Զիլ 157 շարժիչի մասեր, վահան, կարդանային օղագոտու բռունցք, էլեկտրական լուսարձակներ և լուսադիոդային լամպեր, իրականացվել են փոքր մեխանիզացիայի արկղերի, գծային արկղերի և միացման տուփերի, գնացքների հավաքակայանի հովհարի 825վ մալուխների մոնտաժման, ինչպես նաև մետրոյի կայարանի բաց հատվածի լուսավորության մոնտաժման աշխատանքներ:

**40. Զբոսաշրջության զարգացում** ծրագրով նախատեսված 31,300.0 հազար դրամի դիմաց իրականացվել է 4,356.3 հազար դրամի ծախս, որի շրջանակներում 1,989.9 հազար դրամով իրականացվել է Երևանի զբոսաշրջային բազմալեզու քարտեզի տպագրություն, իսկ 2,366.4 հազար դրամով ձեռք է բերվել թվով 4714 ականջակալ՝ Երևան Սիթի տուր զբոսաշրջային ավտոբուսների համար:

**41. Դրոշների տեղադրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 27,831.7 հազար դրամ՝ նախատեսված 35,127.0 հազար դրամի դիմաց, որն ավել է 2021թ. նույն ցուցանիշից 4,756.2 հազար դրամով, որի շրջանակներում ձեռք են բերվել և փոխվել են ՀՀ դրոշներ Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում, մանկապարտեզներում, երաժշտական և արվեստի դպրոցներում, այլ մշակութային կազմակերպություններում, սպորտ-դպրոցներում և շախմատի դպրոցներում, իրականացվել են դրոշների հիմնային պատվանդանների նորոգման աշխատանքներ:

**42. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանների պահպանման համար** ծրագրով իրականացվել է 103,900.0 հազար դրամի ծախս՝ նախատեսվածի չափով, որով սուբսիդավորվել է «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ը:

**43. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 222,723.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչն ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

**44. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 479,376.5 հազար դրամ՝ նախատեսված 482,610.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.3%, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել կրթական, մշակութային, բժշկական և այլ՝ թվով 49 կազմակերպությունների (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, ՓԲԸ, հասարակական կազմակերպություն և այլն), մասնավորապես՝ 2,800.0 հազար դրամ հատկացվել է «Բասկետբոլի կովկասյան լիգա» ՀԿ-ին՝ ամանորի մրցաշարի կազմակերպմանն աջակցելու նպատակով, 14,892.8 հազար դրամը տրամադրվել է «Նոր Բարեկարգում», «Դավթաշեն կանաչապատում», «Արաբկիր Կամար», «Քանաքեռ-Զեյթուն կանաչապատում», «Նուբարաշեն», «Նորք Մարաշի Կանաչ Բարձրունք» ՓԲԸ-ներին կրեդիտորական պարտավորությունների մարման և լուծարման գործընթացը ավարտին հասցնելու նպատակով, 16,708.4 հազար դրամը «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ին որպես դրամաշորի թանգարանի հիմնադրման 50-ամյակի և Հ. Իգիթյանի 90-ամյակին



նվիրված հոբեյանական միջոցառման հանդիսությանն աջակցություն, «Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ին 10,000.0 հազար դրամ՝ օգոստոսի 12-ից 25-ը Սիմֆոնիկ Երևան երաժշտական փառատոնին աջակցելու նպատակով, 15,000.0 դրամ հատկացվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին ամանորյա տոնակատարության շրջանակներում Մաշտոցի պողոտայի ամանորյա զարդարանքների տեղադրման համար, 20,000.0 հազար դրամը՝ «Մոշ Պրոդակշն» ՍՊԸ-ին «Շչեկունչիկ» իմերսիվ պրոյեկցիոն շոուի կազմակերպմանն ու անկացմանն աջակցելու նպատակով, 13,378.0 հազար դրամ՝ «Գեղասահքի և հոկեյի մարզադպրոց» ՀՈԱԿ-ին տանիքի վերանորոգման և գույքի ձեռքբերման համար, 11,068.8 հազար դրամ «Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց»-ին Քույր դպրոցներ ծրագրի 2022թ. եզրափակիչ միջոցառումների անցկացմանն աջակցելու նպատակով, 15,410.2 հազար դրամն ուղղվել է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին՝ «Ախտահանման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրանսպորտային միջոցների ախտահանման աշխատանքների փոխհատուցման համար, 25,745.7 հազար դրամ տրամադրվել է «Երևանտրանս» ՓԲԸ-ին նոր ներկված ավտոբուսների համար իրականացված պահակային ծառայության ծախսերի փոխհատուցման, վնասված պոկված, կոտրված ճանապարհային նշաններն ընկերության տարածք պարբերաբար տեղափոխման ծախսերի փոխհատուցման, Երևանի քաղաքի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների համար ուղևորափոխադրման և հարկային պարտավորությունների մարման նպատակով, 40,064.0 հազար դրամ տրամադրվել է «Շտապ բուժօգնություն» ՓԲԸ-ին այլընտանքային էլեկտրաէներգիայի աղբյուր ունենալու նպատակով գեներատորների ձեռքբերմանն աջակցության, ՀՀ-ին նվիրաբերված Տոյոտա մակնիշի ավտոմեքենաների բժշկական նշանակության ապրանքներով համալրելու և կրեդիտորական պարտավորությունների մարման նպատակով և այլն...

**45. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը** ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 3,909,870.6 հազար դրամ նախատեսված 5,021,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 77.9%:

**46. Տոնական ձևավորում** ծրագրով նախատեսված 635,293.1 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 510,090.9 հազար դրամ, կամ 80.3%: Ծրագրի շրջանակներում 334,084.9 հազար դրամով ձեռք են բերվել տոնական լույսեր և պարագաներ, իսկ 176,006.0 հազար դրամով իրականացվել է Հանրապետության Հրապարակում, Աբովյան փողոցում, Հյուսիսային պողոտայում, Կիկյան և Հաղթանակ կամուրջների վրա և Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի աստիճանավանդակի վրա տոնական լույսերի տեղադրում:

**47. Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ** ծրագրով կատարվել է 19,720.9 հազար դրամի ծախս նախատեսված 44,370.0 հազար դրամի դիմաց, և կատարողականը կազմում է 44.4%: Գումարը որպես սուբսիդիա տրամադրվել է «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին՝ հատակագծի կազմման աշխատանքների համար:

**48. Ներդրումային ծրագրերի իրականացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 107,333.0 հազար դրամ՝ նախատեսված 133,000.0 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 80.7%, որն էլ ամբողջությամբ ուղղվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

**49. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,577.5 հազար դրամ՝ նախատեսված 14,102.7 հազար դրամի դիմաց, որը հատկացվել է թվով 3 վարչական շրջանների համատիրություններին վարչական շրջաններում աղբահանության վճարների գանձման դիմաց:

**50. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում և Տոնավաճառների կազմակերպում** ծրագրերով ծախս չի կատարվել:

**51. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ շինարարական աշխատանքների իրականացում** ծրագրով ծախսը կազմել է 502,242.1 հազար դրամ 538,720.8 հազար դրամի դիմաց, որն ուղղվել է Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջող շինարարական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև 58,580.0 հազար դրամ գումարը ուղղվել է Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի արդյունքում Արցախից ՀՀ ժամանած քաղաքացիներին Արցախ տեղափոխելու տրանսպորտային փոխադրումներին:

**52. Աղբահանություն և սանիտարական մաքրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 293,428.3 հազար դրամ՝ նախատեսված 417,068.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 70.4%, որի շրջանակներում 194,826.0 հազար դրամով ձեռք է բերվել 1 փոքրածավալ բեռնատար մեքենա (պիկապ), 1 հատուկ էքսկավատոր բեռնիչ և 3 աղբատար մեքենաներ: Ծրագրի շրջանակներում 97,956.7 հազար դրամով փողոցներում և բակային հատվածներում կառուցվել են աղբարկղերի համար նախատեսված հարթակներ: 645.6 հազար դրամ գումար վճարվել է որպես խեղման նպաստ:

**53. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 256,918.7 հազար դրամ՝ նախատեսված 335,136.5 հազ. դրամի դիմաց, որի շրջանակներում իրականացվել է բազմաբնակարան շենքերի աղբամուղերի խցանման մաքրման, աղբընդունիչների վերանորոգման, ախտահանման, վարչական շրջաններում կուտակված շինարարական աղբի բարձման, տեղափոխման ծառայություններ:

**54. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» որոշմանիշային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 44,430.2 հազար դրամ՝ նախատեսված 50,430.9 հազար դրամի դիմաց, կամ 88.1%:

**55. «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր** ծրագրով նախատեսված 6,757,133.1 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 6,714,318.1 հազար դրամ, կամ 99.4%, որից 4,557,185.0 հազար դրամն ուղղվել է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում սանմաքրման (այդ թվում՝ ձյան մաքրման) և աղբահանության աշխատանքներին, իսկ 2,157,133.1 հազար դրամ վճարումն իրականացվել է՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի N 63318-20 Ա և N 63319-20 Ա չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին որոշումների համաձայն «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» Պետական կառավարչական հիմնարկի նկատմամբ 16.03.2022թ. և 25.03.2022թ. հարուցված վարույթների:

**56. «Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» ծրագրի շրջանակներում մասհանումների գծով մարումների տրամադրում** ծրագրով իրականացվել է 56,743.0

հազար դրամի ծախս՝ նախատեսված 66,743.0 հազար դրամի դիմաց, կամ 85.0%, որն ուղղվել է ենթավարկային պայմանագրի մասհանման գծով պարտավորությունների կատարմանը:

**57. Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 707,727.7 հազար դրամ՝ 2021թ. փաստացի ծախսից 298,331.4 հազար դրամով ավելի՝ նախատեսված 770,900.0 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 91.8%, որի շրջանակներում իրականացվել են Շենգավիթ վարչական շրջանի Չարբախի կոյուղագծի, Հակոբյանց փողոց-Խաչատրյան 2-րդ նրբանցքի կոյուղագծի, Բաշինջաղյան փողոց 1 նրբ., 16-րդ թաղամասի 23-26 շենքերի, Փափազյան փողոցի 22 շենքի, Բյուզանդի 1/3 շենքի, նոր Արեշ 33 փողոցի, Իսահակյան 28 շենքի, Լեփսիուսի 27, 37, 39 շենքերի, Ծերենցի նրբանցքի 19-27 տների, Նոր Նորքից դեպի Նորքի 1-ին և Այգեգործական փողոցից Նորքի 1-ին փողոցի կոյուղատարների, Ջիվանի փողոցի 20-54 առանձնատների, Մ. Ավետիսյան 4 փողոցից Լեփսիուսի փողոցի, Ֆրունզե փողոցի և Սարկավազի փողոցների և Ներքին Չարբախի կոյուղագծերի կառուցման, ինչպես նաև Ավանեսովի 3 նրբանցքի հեղեղատարի, Բաղյան, Գյուրջյան, Քոչարյան փողոցների հեղեղատարների և Հաղթանակ թաղամասի ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ:

**58. Գետերի հունների մաքրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 38,683.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով:

**59. Շրջակա միջավայրի և օդի աղտոտման դեմ միջոցառումների իրականացում** ծրագրով 13,900.0 հազար դրամի դիմաց իրականացվել է 11,944.2 հազար դրամի ծախս, կամ կատարողականը կազմել է 85.9%, որի շրջանակներում դրամաշնորհ է տրամադրվել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ին՝ Նուբարաշենի բիոգազի հավաքման և այրման կայանի սպասարկման նպատակով:

**60. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում** ծրագրով նախատեսված 3,719,625.7 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 3,718,858.9 հազար դրամ՝ 2021թ. փաստացի իրականացված ծախսից 42,442.2 հազար դրամով ավելի, որից 3,400,000.0 հազար դրամը տրամադրվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն»

ՀՈԱԿ-ին որպես սուբսիդիա, իսկ 318,848.9 հազար դրամով ձեռք են բերվել 2 ջրցան և 7 ինքնաթափ բեռնատար մեքենաներ:

**61. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 26,814.9 հազար դրամ՝ նախատեսված 27,932.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.0%, որի շրջանակներում վարչական շրջանների տարբեր հատվածներում (աղբի կոնտեյնրների հարակից տարածքներ, մանկապարտեզներ, առանձնակի դեպքերում՝ բազմաբնակարան շենքեր), իրականացվել են դեռատիզացիոն աշխատանքներ:

**62. Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,695.0 հազար դրամ՝ նախատեսված 21,320.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 31.4%, որի շրջանակներում Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններում իրականացվել են հասարակական զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքներ:

**63. Թափառող կենդանիների վնասազերծում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 258,379.5 հազար դրամ՝ նախատեսված 258,379.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որի շրջանակներում կենտրոն են տեղափոխվել թվով 3673 շուն, որից 2272-ը ստերջացվել են, 215-ը՝ որդեգրվել, քնեցման են ենթարկվել և ավտոմեքենայի հետևանքով անկել են 852-ը /ներառյալ լեյշմանիոզով վարակված ծներ/, վերապատվաստվել են շուրջ 549 շուն:

**64. Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ՝ աշխատանքների իրականացում և Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ դրամաշնորհային ծրագրի իրականացում** ծրագրերով ծախսը կազմում է 362,254.6 հազար դրամ՝ նախատեսված 424,754.6 հազար դրամի դիմաց, Երևան համայնքի կողմից համաֆինանսավորում չի իրականացվել:

**65. Շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացում** ծրագրով փաստացի ծախսը նախատեսված 421,759.4 հազար դրամի դիմաց կազմում է

110,008.5 հազար դրամ՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 104,008.5 հազար դրամով ավելի, իրականացվել է «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն»-ի վերանորոգման աշխատանքներ, ԹԵՅՉԻԲԻՆԻ 8/8 հասցեում «Կենդանիների վնասազերծման կենտրոն» ՊՈԱԿ-ի ադմինիստրատիվ շենքի կառուցման աշխատանքներ, ինչպես նաև սկսվել են «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» հիմնարկի արտադրական մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքներ:

**66. Երևանյան լճի և Հրազդան գետի բնապահպանական պաշտպանում և մաքրում**

ծրագրով նախատեսված 120,860.0 հազար դրամի դիմաց իրականացվել է 80,377.0 հազար դրամի ծախս, կատարողականը կազմել է 66.5%, որի շրջանակներում իրականացվել են Հրազդան գետի վրա աղբաորսիչ ճաղավանդակների տեղադրման և կուտակված աղբի հավաքման և տեղափոխման աշխատանքներ: Երևանյան լճից տեղափոխվել է շուրջ 470 մեքենա աղբ:

**67. Ինքնակամ կառույցների քանդում**

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 20,689.6 հազար դրամ՝ նախատեսված 21,860.0 հազար դրամի դիմաց նախորդ տարվա ցուցանիշից ավելի 17,189.6 հազար դրամով, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 94.6%, որի շրջանակներում քանդվել են այն ինքնակամ կառույցները, որոնք հնարավոր չի եղել իրականացնել կառուցապատողների հաշվին, ապամոնտաժվել են նաև ապօրինի գովազդային վահանակները:

**68. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների կողմից վարձակալված բնակարանների փոխհատուցում**

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,564.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 3,564.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որն ուղղվել է վերաբնակեցված բնակիչների համար բնակարանների վարձակալությանը:

**69. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում**

ծրագրով նախատեսված 500,000.0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

**70. Շենքերի գեղարվեստական լուսավորում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 66,061.0 հազար դրամ, ինչը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ավել է 51,103.0 հազար դրամով՝ նախատեսված 112,830.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 58.5%, որն ուղղվել է Էրեբունի վարչական շրջանի Սասունցի Դավթի հրապարակամերձ շենքի և Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի փողոցի շենքերի LED տեսակի լուսավորության կառուցմանը, ինչպես նաև առկա ցանցի վերականգնմանը և պահպանմանը:

**71. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,766,931.0 հազար դրամ՝ նախատեսված 2,269,951.6 հազար դրամ գումարի դիմաց, որից 1,500.0 հազար դրամ գումարը հատկացվել է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երքալույս» ՓԲԸ-ի պահպանման ծախսերին՝ աշխատավարձ, էլեկտրաէներգիա և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

**72. «Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ), «Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր» (պատվիրակված լիազորություններ) և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)** ծրագրերի փաստացի ծախսը կազմել է 162,495.1 հազար դրամ նախատեսված 218,677.0 հազար դրամի դիմաց, կամ 74.3%:

**73. Արտաքին լուսավորության ցանցի արդիականացում** ծրագրով նախատեսվել է 836,413.9 հազար դրամ գումար, որի փաստացի ծախսը կազմել է 431,280.0 հազար դրամ կամ 95.4%, որի շրջանակներում իրականացվել են Աշտարակի խճուղու և Հանրապետության հրապարակի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև ՄԱԶԾ «Աջակցություն Հայաստանի համայնքներին կլիմայական «խելացի» լուծումների ներդրման և իրականացման հարցում» ծրագրի շրջանակներում իրականացվել են Շենգավիթ, Մալաթիա-Սեբաստիա, Էրեբունի և

Արաբկիր վարչական շրջանների քաղաքային լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքներ:

**74. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,700.0 հազար դրամ՝ նախատեսված 12,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 22.5%, որն ուղղվել է թվով 36 հասցեներում սեյսմիկ հետազոտման և ինքնակամ կառույցների օրինականացման ընթացքում շինությունների հետազոտման աշխատանքներին և սողանքի առաջացման ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններին: Աշխատանքներ են իրականացվել հ.87, հ.140, հ.148, հ.159, հ.105, հ.111, հ.128, հ.142, հ.40, հ.67, հ.55 մանկապարտեզներում, հ.5 և 12 պոլիկլինիկաներում, Գ. Նժդեհի 8, Սիսակյան 20, Ավետիսյան 67, Կորյուն 8, Էստոնական 12/6, Մարգարյան 2-րդ նրբ. 2-րդ շ., Նորագավիթ կայարանի թվով 12 շենքերում, Հետազոտվել են «Շտապ բուժօգնություն» ՓԲԸ-ի, Փակ շուկայի գետնանցումը, Արգավանդ գ. տարածքի կամուրջը, Խ. Սամուելյանի անվան հ.47 դպրոցի և Պատանի հանդիսատեսի թատրոնի շենքերը:

**75. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 340,277.8 հազար դրամ՝ նախատեսված 363,806.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93.5%, որի սահմաններում մայրաքաղաքի 10 վարչական շրջաններում նորոգվել են թվով 270 բազմաբնակարան շենքերի շուրջ 56,408.3քմ հարթ տանիք, 9,601.0 հազար դրամով գնվել է տանիքների նորոգման համար շին. նյութ:

**76. Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում** ծրագրով նախատեսված 769,733.0 հազար դրամի դիմաց 643,738.7 հազար դրամով Երևանի 10 վարչական շրջաններում հիմնանորոգվել կամ մասնակի նորոգվել են են շուրջ 150 թեք տանիք, մասնավորապես՝ Աճառյան 52, Աճառյան 20/3, Ռոստովյան 15, Նուբարաշեն 5/5, Էրեբունի 9, Ավետիսյան 67, Ազատության պողոտա 3, Կոմիտասի պողոտա 39, Ամիրյան 5, Չարենց 27, Մոսկովյան 21, Թումանյան 10, Թումանյան 33, Փարպեցի 4.6, Զավարյան 8, Նալբանդյան 19, Վարդանանց 4, Տիգրան Մեծ 27, Սայաթ-Նովա 12, Տպագրիչներ 13, Տիգրան Մեծ 33, Տիգրան Մեծ 10, Մալյան նրբ. 1, Մառի 9, Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի 8, 13 շենքերի, 6-րդ փողոցի 150 շենքի տանիքները, ինչպես նաև 182,671.3



հազար դրամով գնվել է տանիքների նորոգման համար շին.նյութ, որը տրամադրվել է համատիրություններին՝ տանիքների նորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

**77. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում**

ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 1,632,995.6 հազար դրամ նախորդ տարվա ցուցանիշից 588,066.0 հազար դրամով ավելի՝ նախատեսված 2,463,130.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 66.3%, որից 55,645.0 հազար դրամի շրջանակներում համատիրություն-վարչական շրջան համագործակցության շրջանակներում իրականացվել են բակային տարածքների պահպանման ընթացիկ աշխատանքներ, ինչպես նաև 99,535.8 հազար դրամը ուղղվել է բակերի ընթացիկ նորոգմանը, նստարանների, զրուցարանների և խաղերի ընթացիկ նորոգման, ներկման աշխատանքներին, 1,203,940.1 հազար դրամը բակային տարածքներում խաղահրապարակների և միջբակային աստիճանների կառուցմանը և հիմնանորոգմանը, 273,874.8 հազար դրամով ձեռք բերվել և մանկական խաղահրապարակներում և բակային տարածքներում տեղադրվել են ռետինե հատակներ, արհեստական խոտածածկեր, ճոճանակներ, սահարաններ, նստարաններ և զրուցարաններ: Ընդհանուր նորոգման և բարեկարգման աշխատանքներ են իրականացվել մայրաքաղաքի շուրջ 110 բակերում: Աշխատանքներ են իրականացվել մասնավորապես Ավան-Առինջ 1-ին մկշ 2/4 շենքի, Ավան-Առինջ 2-րդ մկշ. 2/5-2/6 շենքի, Ավան-Առինջ 1-ին մկշ 2/3 շենքի, Դրոյի 26, Հասրաթյան 7/3, 7/4, 7/5, Լեփսիուսի 3ա, Հաղթանակի զբոսայգու հարող տարածքում, Ռայնիսի 28, 11ա, 1 շենքերի, Դրոյի 24, Վարշավյան փ. 59, Անդրանիկի 143, Բ-2 թաղ. 135, Օհանովի 7, Ա-3 թաղ. Անդրանիկի 23,29,31 և 33, Բաբաջանյան 15, Անդրանիկի 135, Շերամի 107, Սվաճյան 38, Անդրանիկի 87, Անդրանիկի 64-66, Բ-1 թաղ. Րաֆֆու փ. հ.73,75,77, Րաֆֆու 97-Րաֆֆու 93, Ճառագայթային Գ-Անդրանիկի 125 շենքերի, Նոր Արեշ 15փ. 7, Արցախի 32ա և 32 բ, Էրեբունի փ. 11 շ, Սարի Թաղի 7փ. 66 մանկապարտեզի, Արցախի 14, Դավթաշեն 4-րդ թղմ. 1, 5, 6,10, 11, 12, 33, 49, 50 շենքերի, Դավթաշեն 1-ին թղմ. 16, 28, Դավթաշեն 2-րդ թղմ. 1, Դավթաշեն 2-րդ թղմ. 2, Օրբելի 65 Ա Բաղրամյան 51, Կոմիտաս 56-58 և Տիգրանյան 7, Հալաբյան 35,37,39, Մարգարյան 39,41, Բաշինջաղյան 1 նրբ.13,15, Լենինգրադյան 14,18, Ֆուչիկի 2-րդ նրբ.7, Ֆուչիկի 20, Շինարարների 11, Տիգրան Մեծ 24-28, Այգեստան 9-րդ փ. 65, Բուզանդ 1, Նորք 6փ. 2 նրբ., Նորք 5փ. Պուրակ, Ա. Արմենակյան

272, Նուբարաշեն վարչական շրջանի 11 փողոցի 14 և այլ հասցեներում, շենքերի բակային և հարակից տարածքներում: 40,000.0 հազար դրամով հիմնանորոգվել է թիվ 108 դպրոցի հարակից ֆուտբոլի դաշտը:

**78. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 568,910.3 հազար դրամ՝ նախատեսված 580,037.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.1%, որի շրջանակներում 495,812.4 հազար դրամով վերանորոգվել կամ մասնակի նորոգվել են բազմաբնակարան շենքերի թվով 598 շքամուտքեր, տեղադրվել են դռներ, փոխվել են լուսամուտները: Աշխատանքների կազմակերպման արդյունավետությունն ապահովելու նպատակով մուտքերի նորոգման աշխատանքներ են իրականացվել նաև համատիրություն-վարչական շրջան համագործակցության շրջանակներում ուղղակի պատվերի եղանակով՝ 71,498.5 հազար դրամ գումարի շրջանակներում: 1,599.3 հազար դրամով ավարտին է հասցվել Նուբարաշեն 11-րդ փողոցի հ.19 շենքի ամրացման աշխատանքները:

**79. Ջրային կառույցների շահագործում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 335,000.0 հազար դրամ՝ նախորդ տարվա նախատեսվածից 30,000.0 հազար դրամով ավելի՝ նախատեսված 335,000.0 հազար դրամ գումարի դիմաց, որն ուղղվել է թվով 37 ջրային կառույցների պահպանմանը:

**80. Կաթսայատների և գույքերի պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 13,759.3 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որն ամբողջությամբ ուղղվել է Երևանի սեփականություն հանդիսացող կաթսայատների պահպանմանը:

**81. Վթարային պատշգամբների նորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 27,315.4 հազար դրամ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 5,304.0-ով ավելի՝ նախատեսված 112,141.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 24.4%, որի սահմաններում հիմնանորոգվել են Արաբկիր, Էրեբունի, Նոր Նորք, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների շուրջ 40 շենքերի վթարային պատշգամբներ:

**82. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 54,622.8 հազար դրամ՝ նախատեսված 250,000.0 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 21.8%: Ծրագրի շրջանակներում կնքվել է պայմանագիր 8 անուն թվով 38

բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով, որից 2 անուն թվով 11 բժշկական սարքավորումներ (ավտոկլավ 100լ և ՈՒՁՀ 3 տվիչով) արդեն տրամադրվել են Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններին: Մնացյալ 6 անուն թվով 27 բժշկական սարքավորումները (շարժական ուլտրաձայնային համակարգը 3 տվիչով, ստացիոնար և շարժական ռենտգեն ապարատը, թվային ստացիոնար ուլտրաձայնային համակարգը և ավտոկլավը 50լ) կտրամադրվեն մինչև 2023թ. մարտ ամիսը:

**83. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 500,070.0 հազար գրամ գումար՝ նախորդ տարվա ցուցանիշից 250,070.0 հազար դրամով ավել, որի փաստացի ծախսը կազմել է 317,787.6 հազար դրամ, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 63.5%: Ծրագրի շրջանակներում ավարտին են հասցվել թիվ 12 պոլիկլինիկայի հիմնանորոգման աշխատանքները, միաժամանակ սկսվել է թիվ 5 պոլիկլինիկայի հիմնանորոգման աշխատանքներ:

**84. Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 16,440.5 հազար դրամ՝ նախատեսված 20,000.0 հազար դրամի դիմաց՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 8,736.1 հազար դրամով ավելի, որի սահմաններում թվով 74 սոցիալապես անապահով բնակիչներ անվճար անցել են կոմպյուտերային տոմոգրաֆիայի, 80 բնակիչներ՝ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի, 73 բնակիչ մամոգրաֆիկ հետազոտություն և շուրջ 70 բնակիչ՝ ախտորոշիչ կորոնարոգրաֆիկ ծառայություն:

**85. Սպորտային միջոցառումների կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 70,565.3 հազար դրամ՝ նախատեսված 105,000.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 67.2%, որի շրջանակներում Երևան քաղաքում 2022 թվականին իրականացվել են մի շարք սպորտային միջոցառումներ, այդ թվում կաշվե գնդակ, շաշկու մրցույթ, Ազգային ժողովի մրցանակաբաշխություն, լավագույն մարզական ընտանիք, Արցախի սպորտային առաջնություն, Ֆոխտպոլի առաջնություն և այլն:

**86. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 734,356.9 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 1,134,584.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 64.7%, որից 25,842.0 հազար դրամը ուղղվել է Սիրահարների զբոսայգու պահպանմանը, 31,048.3 հազար

դրամը Հաղթանակ զբոսայգու Անմար կրակի գազամատակարարման և այգիներում էլեկտրաէներգիային մատակարարմանը, 6,076.3 հազար դրամը Երևանի 2800-ամյակի այգու ջրամատակարարման ծառայությանը: 23,906.7 հազար դրամն ուղղվել է Նոր Արաբկիր զբոսայգում Արագիլներ կոմպոզիցիայի պատվանդանի սալիկների և Օղակաձև այգում Նեմեսիս հուշարձանի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներին: 194,685.0 հազար դրամով կառուցվել է 16-րդ թաղամասի 1-ին շրջայի այգին, Հրազդան կիրճի հարակից Նոր Արաբկիր զբոսայգին, Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածի լուսավորության համակարգը, իրականացվել են Երևան քաղաքի Խ. Աբովյանի անվան պուրակի վերականգնման աշխատանքներ, Հաղթանակ զբոսայգու Սահմանապահների ծառուղու բարեկարգման աշխատանքներ, Երևան քաղաքի Երկրորդ աշխարհամարտում տարած Հաղթանակի 40-ամյակի հուշահամալիրի բարեկարգում, Երևանյան լճի աջակողմյան ափամերձ տարածքի բարեկարգման աշխատանքներ, հանգստի գոտիներում իրականացվել են շատրվանների պոմպերի վերանորոգման և նորերի կառուցման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են բարեկարգման և կառուցապատման աշխատանքներ Նուբարաշենի կենտրոնական այգում, Նոր Նորք վ/2 Նանսենի 6 և 10 շենքերի միջնամասի հանգստի գոտում, Բաղյան 1, Վիլնյուսի 101, Գյուլիքեխվյան 19,21 շենքերի հարակից տարածքներում Նանսենի այգու տարածքում բարեկարգվել է խաղահրապարակը, այգիներում իրականացվել են լուսավորության համակարգերի, նստարանների, լուսատուների, հենապատերի վերանորոգման և ներկման աշխատանքներ:

**87. Հեծանվահրապարակի շահագործում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,661.7 հազար դրամ՝ նախատեսված 35,000.0 հազար դրամի դիմաց, որով իրականացվել է հեծանվահրապարակի էլեկտրաէներգիայի վարձավճարը:

**88. Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում և պահպանում** ծրագրով նախատեսվել է 147,697.2 հազար դրամ՝ 2021թ. նախատեսվածից 29,092.4 հազար դրամով ավելի: Ծրագրի փաստացի ծախսը կազմել է 122,976.1 հազար դրամ, կամ 83.3 %, որի շրջանակներում իրականացվել են Շենգավիթ վարչական շրջան Կարմիր բլուրի արգելանոցի կառուցապատման աշխատանքներ, կառուցվել են խաղադաշտեր Նժդեհի 56Ա, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Իսակովի պողոտայի հ. 38/3 շենքի

կողմասում, Անդրանիկի 127 շենքի բակում, կառուցվել է Ա-3 թաղամասի 179 դպրոցի ֆուտբոլի դաշտը:

**89. Գրադարանային ծառայություններ** ծրագրով նախատեսվել է 604,764.5 հազար դրամ գումար, որից 602,521.1 հազար դրամն ուղղվել է Երևանի համայնքային թվով 19 գրադարանային կազմակերպությունների սուբսիդավորմանը:

**90. Գրադարանների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում** ծրագրով նախատեսված 20,000.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմում է 18,645.8 հազար դրամ կամ 93.2 %, որի շրջանակներում ձեռքբերվել և Երևանի գրադարաններին է տրամադրվել շուրջ 262 անուն թվով 7222 գրքեր:

**91. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 350,265.4 հազար դրամ՝ նախատեսված 350,684.2 հազար դրամի դիմաց, որից 295,649.8 հազար դրամը հատկացվել է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 4 թանգարանների պահպանման համար, իսկ տարբերությունը հատկացվել է Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեից, որից 10,952.8 հազար դրամը՝ «Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի պահպանման համար:

**92. Թանգարանների նորոգում** ծրագրով նախատեսվել է 25,000.0 հազար դրամ, փաստացի ծախսը կազմել է 1,191,8 հազար դրամ, կամ 4.8%, որով իրականացվել են Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թանգարանի նորոգման աշխատանքներ:

**93. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 484,880.3 հազար դրամ՝ նախատեսված 486,320.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.7%՝ թվով 13 մշակույթի կենտրոնների պահպանման համար:

**94. Մշակութային միջոցառումների իրականացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 791,1016.0 հազար դրամ՝ նախատեսված 882,402.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 89,6%, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների կողմից կազմակերպված մշակութային միջոցառումները, որոնցից հիմնականներն են Հայոց բանակի օր, Կանանց տոն, Թատրոնի համաշխարհային օրվան նվիրված «Արտավազը» փառատոն , Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված միջոցառման տեխնիկական սպասարկում,

երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես մրցույթ-փառատոնի, երեխաների իրավունքների պաշտպանության օրվա միջոցառումների, հեծանվի միջազգային օրվան նվիրված միջոցառումների, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործների ամենամյա ստուգատես-փառատոնի, ինչպես նաև Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին նվիրված միջոցառումների կազմակերպմանը:

**95. Կենդանաբանական այգու ցուցադրություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 728,510.1 հազար դրամ՝ նախորդ տարվա 334,365.3 հազար դրամի դիմաց, որից 302,564.0 հազար դրամը հատկացվել է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար: Տարբերություն 425,846.1 հազար դրամ գումարը տրամադրվել է Երևան համայնքի 2022թ. բյուջեից վայրի կենդանիների պահպանման, ցուցադրման, անհետացող տեսակների բազմացման, էլեկտրոնային տոմսի միասնական համակարգ ծրագրի ներդրման, շենքերի և վանդակների տանիքների հիմնանորոգման, վագրերի վանդակի վերանորոգման և վանդակում լողավազանի կառուցման գծով առաջացած վնասի փոխհատուցման համար:

**96. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 142,564.4 հազար դրամ՝ 151,504.5 հազար դրամի դիմաց, որն ուղղվել է «Հայ-Արտ մշակութային կենտրոն» ՓԲԸ-ի, «Յուրի Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի, «Երևան փողային նվագախումբ» ՀՈԱԿ-ի և «Հայաստանի փոքրիկ երգիչներ մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի պահպանմանը:

**97. Թատերական ներկայացումներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 455,271.3 հազար դրամ՝ նախատեսված 455,271.3 հազար դրամի դիմաց և հատկացվել է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 3 թատրոնների պահպանման համար:

**98. Թատրոնների հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 197,644.3 հազար դրամ Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնի վարչական շենքի հիմնանորոգման, դահլիճի ձայնային համակարգի պարագաների, բեմի պրոյեկցիոն համակարգի, լուսային համակարգի պարագաների, բեմի կոնստրուկցիաների էլեկտրական ճախարակների համակարգի պարագաների ձեռքբերման համար, որի դիմաց փաստացի ծախսը կազմել է

30,512.9 հազար դրամ, որով սկսվել են Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնի հիմնանորոգման աշխատանքները:

**99. Հուշարձանների վերանորոգում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 78,009.9 հազար դրամ՝ նախատեսված 102,469.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 76.1%, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի հուշարձանների վրացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման աշխատանքները, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում: Նախատեսված 96,410.0 հազար դրամ գումարը հատկացվել է ՀՀ 2021թվականի պետական բյուջեից 28.10.2021թ. թիվ 1779-Ն որոշումով որպես կապիտալ սուբվենցիա: Նշված գումարից 75,000.0 հազար դրամ գումարը տրամադրվել է որպես 2008թ. մարտի 1-ին Երևանում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ զոհվածների հիշատակի հուշարձանի ձեռքբերման կանխավճար:

**100. ՀՀ պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացում** ծրագրով նախատեսված 37,651.5 հազար դրամ գումարի դիմաց ծախս կատարվել է 18,094.4 հազար դրամի ծախս: Նշված գումարից 18,002.4 հազար դրամը տրամադրվել է որպես Կարեն Դեմիրճյանի հուշարձանի ձեռքբերման համար պայմանագրով սահմանված երկրորդ և երրորդ փուլերի կանխավճար (առաջին փուլի կանխավճարի գումարը հատկացվել է 2021թ.):

**101. Անդամակցության վճարներ ծրագրով** փաստացի ծախսը կազմել է 4,999.6 հազար դրամ՝ նախատեսված 9,417.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 53.1%, որն իր մեջ ներառում է Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիային, Եվրոպական քաղաքների ասոցիացիային (EUROCITIES), LUCI ASSOCIATION, ինչպես նաև Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիային հատկացվող գումարները:

**102. Նախադպրոցական ուսուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,209,916.0 հազար դրամ՝ նախատեսված 9,966,290.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 92.4%, որի շրջանակներում ֆինանսավորվել է թվով 163 մանկապարտեզ: Գումարը տրամադրվել է փաստացի հաճախող երեխաթվի սկզբունքով, մեկ երեխայի ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը

հաշվարկվել է 28.0 հազար դրամի չափով, ինչպես նաև յուրաքանչյուր մանկապարտեզի պահպանման ծախսերի համար ամսական հատկացվել է 850,0 հազար դրամ: Նորոգվող մանկապարտեզները ֆինանսավորվել են փաստացի ծախսի հաշվարկների հիման վրա: 3,900.0 հազար դրամը ուղղվել է թիվ 175 դպրոցի նախակրթարանի սաների համար սննդի ձեռքբերմանը:

**103. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 111,126.1 հազար դրամ 200,000.0 հազար դրամ գումարի դիմաց, կամ կատարողականը կազմել է 55.6%: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել և Երևան քաղաքի մանկապարտեզներին բաշխվել է շուրջ 18 անուն թվով 3926 գույք, այդ թվում սառնարան, սալօջախ, վլացքի մեքենա, զգեստապահարան, մահճակալ, սեղան, աթոռ, վլացքի մեքենա, աշխատանքային կենտրոն և այլն:

**104. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 23,388.8 հազար դրամ՝ նախատեսված 23,627.0 հազար դրամ գումարի դիմաց, որի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ֆինանսավորվել է «Երևանի հ.175 դպրոց» ՊՈԱԿ-ը:

**105. Սոցիալական որոշ խմբերի 1,5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում /պատվիրակված լիազորություն/** ծրագրի շրջանակներում նախատեսված 87,526.2 հազար դրամի դիմաց 25,732.0 հազար դրամ տրամադրվել է Երևանի նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար:

**106. Հանրակրթական ուսուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 18,366,972.5 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որի շրջանակներում, որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով ֆինանսավորվել են Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող թվով 153 դպրոցները:

**107. Արտադպրոցական դաստիարակություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,240,369.4 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 4,317,669.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.3%, որից՝ որպես ՀՀ 2022 թվականի



պետական բյուջեից հատկացված սուբվենցիա 55,863.0 հազար դրամով ֆինանսավորվել են Երևանի թվով 2 սպորտ-դպրոցներ, իսկ 4,180,906.4 հազար դրամը ուղղվել է երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների, շախմատի դպրոցների ֆինանսավորմանը: 3,600.0 հազար դրամ գումարը տրամադրվել է դպրոցականների ամառային հանգստի համար տրանսպորտի վարձակալության ծառայությանը:

**108. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում ծրագրով (պատվիրակված լիազորություններ)**

փաստացի ծախսը կազմել է 6,793.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից որպես պատվիրակված լիազորություն՝ հաշվի առնելով կրթահամալիրի առաձնահատկությունները:

**109. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում**

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 60,136.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որը հատկացվել է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, որն ուղղվել է Երևան քաղաքի թվով 26 երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների դասարաններում սովորող աշակերտների ուսման վարձավճարների փոխհատուցմանը:

**110. Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում**

ծրագրով նախատեսված 113,702.0 հազար դրամ գումարի դիմաց փաստացի 80,892.5 հազար դրամ գումարով մարզադպրոցների և երաժշտական դպրոցների համար ձեռք է բերվել թվով 194 հատ 25 անուն երաժշտական գործիքներ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ, կոնտրաբաս, ֆլեյտա, հոբոյ, կլարնետ, գալարափող, շեփոր, քանոն, մարիմբա և այլն, ձեռք է բերվել 36 անուն թվով 751 մարզագույք՝ սկավառակ, պտտածող, գնդակ, ցանկապարան, թենիսի ռակետներ, հանտել, մարմնամարզական նժույգ, բասկետբոլի գնդակ, ծանրամարտի ձող, նետման նիզակներ, դիմակ, մարմնամարզական կամրջակ, բադմինթոնի սարքեր, ձեռնաթիակ, վարժասարքեր, ըմբշամարտի խրտվիլակ, մարմնամարզական պարան, բուլավա և այլ մարզական գույք:

**111. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում**

ծրագրի կատարողականը կազմել է 77.0%, և 217,911.8 հազար դրամով՝ նախատեսված 282,977.7 հազար դրամի դիմաց, իրականացվել է Դավթաշեն վարչական շրջանի Ավետ

Տերտերյանի անվան արվեստի դպրոցի ցանկապատի, Շենգավիթ վարչական շրջանի թենիսի դաշտի կառուցման աշխատանքներ, Շենգավիթ համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի հիմնանորոգում, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի հիմնանորոգում, ինչպես նաև 4 դասասենյակների հիմնանորոգում:

**112. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում**

ծրագրով նախատեսվել է 3,148,872.0 հազար դրամ գումար նախորդ տարվա 1,687,519.4 հազար դրամի դիմաց և ծրագրի շրջանակներում 2,642,329.9, հազար դրամով ավարտին են հասցվել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 82, Շենգավիթ վարչական շրջանի հ. 146, Դավթաշեն վարչական շրջանի հ. 58 մանկապարտեզների նորոգման աշխատանքները, բարեկարգվել է Աջափնյակ վարչական շրջանի հ. 36 մանկապարտեզի բակը, և սկսել են հիմնանորոգվել Աջափնյակ վարչական շրջանի հ. 49 մանկապարտեզի բակը, հ. 50 մանկապարտեզը, Էրեբունի վարչական շրջանի հ. 63, Շենգավիթ վարչական շրջանի հ. 137, հ. 143, հ. 147, Աջափնյակ վարչական շրջանի հ. 44, Կենտրոն վարչական շրջանի հ. 15, Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի հ. 77, հ. 86, հ. 95, Դավթաշեն վարչական շրջանի հ. 61 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքներ, նորոգվել է Արաբկիր վարչական շրջանի հ. 28 մանկապարտեզի սանհանգույցները: Ծրագրի շրջանակներում 378,000.0 հազար դրամ է հատկացվել Միավորված ազգերի զարգացման ծրագրին՝ թվով 6 նախադպրոցական հաստատությունների՝ թիվ 19, 37, 52, 111, 145, 131 մանկապարտեզների տանիքների վերանորոգման նպատակով: Ծրագրի փաստացի կատարողականը կազմել է 83.9 %:

**113. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում**

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 28,452.0 հազար դրամ՝ նախատեսված 36.474.3 հազար դրամի չափով, որի շրջանակներում կազմակերպվել են առարկայական օլիմպիադաներ, իրականացվել են «Ուսուցչի օր», կիրառական ռազմագիտության միջոցառումներ, դաստիարակների և դայակների մեթոդական վերապատրաստում, մանկավարժների, տնօրենների խրախուսում, և այլն:

**114. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ), Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական**

հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ), Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը (պատվիրակված լիազորություններ), Հանրակրթական դպրոցներին գույքով եւ տեխնիկայով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսված 299,771.9 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 275,667.9 հազար դրամ:

**115. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,737.0 հազար դրամ՝ նախատեսված 16,456.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 59.2%:

**116. Երեխայի իրավունքների եւ շահերի պաշտպանություն և Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովում** ծրագրերով ծախսը կազմել է 2,040.0 հազար դրամ նախատեսված 6,525.0 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում երեխաները ապահովվել են գրենական պիտույքներով:

**117. Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման նպատակով նոր համակարգի ներդրման իրականացում, Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում** ծրագրերով նախատեսված 151,504.0 հազար դրամի դիմաց կատարվել է 93,499.8 հազար դրամի ծախս, որի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 2022 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարան դիմած սոցիալական խոցելի խմբերին դասվող անձանց, աջակցություն է ցուցաբերվել բնակչության համապատասխան խմբերին և այլն:

**118. Հասարակական կազմակերպություններին աջակցություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 83,100.4 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 105,500.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 78.8%, որի շրջանակներում աջակցություն է տրամադրվել թվով 12 հասարակական կազմակերպությունների: Ծրագրի շրջանակներում 10,476.9 հազար դրամ գումար է հատկացվել «Զինվորի տուն» բարեգործական ՀԿ-ին հենաշարժողական խնդիրներ ունեցող զինծառայողների կեցության բարելավման համար, 5,450.0 հազար դրամ գումարը Ամբրա հոգեկան

բարեկեցության կենտրոն ՀԿ-ին՝ 44-օրյա պատերազմում զոհված հերոսների ընտանիքների անդամների վերաճնունդ ծրագրի իրականացման համար, 28,000.0 հազար դրամ գումար Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ին տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքը կազմակերպելու համար, ներառական ճամբարի կազմակերպման համար 6,995.7 հազար դրամ է հատկացվել Լիարժեք կյանք ներառական հասարակության խթանման ՀԿ-ին:

**119. Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում, Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն, Հայրենադարձ և փախստական ընտանիքներին աջակցություն, Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն, Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ** ծրագրերով բազմազավակ ընտանիքներին տրամադրվել են մահճակալներ, կահույք, գրասեղան, գազօջախ, հեռուստացույց և այլ գույք և կենցաղային տեխնիկա, ձեռք են բերվել սննդի ծանրոցներ, արտակարգ իրավիճակներում հայտնված անձանց բնակարաններում իրականացվել են անհետաձգելի նորոգման աշխատանքներ, կազմակերպվել են ընտանիքի անդամների հուղարկավորություններ: Սոցիալական աջակցության շրջանակներում իրականացվել է ուսման վարձի փոխհատուցում:

**120. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 643,988.9 հազար դրամ՝ նախատեսված 649,368.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.2%, որի սահմաններում կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի աշխատակիցները ապահովվել են սոցիալական փաթեթով:

**121. Առողջության ապահովագրություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել 397,625.4 հազար դրամ՝ նախատեսված 469,296.8 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում առողջապահական ապահովագրություն են ստացել Երևանի քաղաքապետարանի և

վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցները, ՔԿԱԳ աշխատակիցները, «Երևանտրանս» ՓԲԸ վարորդները, «ԳՇՊՇ» ՓԲԸ սպասարկող անձնակազմը, «Կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի, «Երևանի ավտոբուս» և «Ջրային կառույցներ» ՓԲԸ-ների հաստիքացուցակով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողները, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրման հիմնարկ»-ի, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի, Երևան հիմնադրամի, ինչպես նաև Երևանի ենթակայության մանկապարտեզների, շախմատի դպրոցների, երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների, մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության, մշակույթի կենտրոնների, այլ մշակութային կազմակերպությունների, գրադարանների, թատրոնների և թանգարանների շուրջ 11683 աշխատակիցները:

**122. ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ծրագրով** հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդի ծախսը կազմել է 3,498,716.0 հազար դրամ, որից 3,471,540.4 հազար դրամը ուղղվել է Բաբաջանյան-Աշտարակի խճուղու 9.4 կմ երկարությամբ և 24 մ միջին լայնությամբ նոր ճանապարհահատվածի կառուցման, Արգավանդ-Շիրակ 2.7 կմ երկարությամբ ճանապարհահատվածի /ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջի/ կառուցման, Դեպոյի կառուցման շրջանակներում հողի օտարման և տարաբնակեցման ծախսերին, և ծրագրի չնախատեսված ծախսերին՝ բողոքների, շտկիչ միջոցառման պլանի (ՇՄՊ) շրջանակներում փոխհատուցումների, իրավաբանական ծառայությունների, Դեպոյի կառուցման տեխնիկական հսկողություն ծրագրի ֆինանսական աուդիտի դիմաց ուղղվել է Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրին: Կնքված դրամաշնորհային պայմանագրերով 8,225.7 հազար դրամն ուղղվել է «Նոր Նորքի ուսանողական ավան» ՓԲԸ-ին այլ անձանց դեբիտորական պարտքերի մարման և լուծարային գործընթացն ավարտին հասցնելու համար, իսկ 15,998.6 հազար դրամը հատկացվել է Տեղ համայնքապետարանին՝ որպես ոռոգման ներքին ներտնտեսային ցանցի կառուցման շինարարական աշխատանքների 10% գումարի չափով աջակցություն:

Ֆոնդային մասի պահուստային ֆոնդից ծախս չի կատարվել:

Վարչական մասի պահուստային ֆոնդից բյուջեի ֆոնդային մաս գումար չի հատկացվել:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեն կատարվել է 8,611,831.5 հազար դրամ պակասուրդով նախատեսված (ճշտված) 23,953,065.7 հազար դրամ պակասուրդի դիմաց:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ      Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<p>Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկում</p>	<p>«Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» և «Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) վերաբերյալ հանրային քննարկումների հրավերները՝</p> <p>ա.09.02.2023թ. հրապարակվել են Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային <a href="http://www.yerevan.am">www.yerevan.am</a> կայքում,</p> <p>բ.09.02.2023թ. հրապարակվել են իրավական ակտերի նախագծերի միասնական հրապարակման կայքում (<a href="http://www.e-draft.am">www.e-draft.am</a>),</p> <p>գ.09.02.2023թ. հրապարակվել են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում,</p> <p>դ.փետրվարի 9-ից մինչև փետրվարի 24-ը ներառյալ փակցվել են Երևանի քաղաքապետարանի Արգիշտի փ. 1 և Բուզանդի 1/3 վարչական շենքերում և վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:</p>
<p>Հանրային քննարկումների մասնակիցները</p>	<p>Հանրային քննարկումների հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝</p> <p>ա.նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներին առաջարկություններ և առարկություններ է ներկայացրել մեկ քաղաքացի՝</p> <p>Գրիգոր Ավետիսյան (09.02.2023թ., <a href="mailto:zargacum@yerevan.am">zargacum@yerevan.am</a>)</p> <p>բ.հանրային բաց լսումների եղանակով 09.02.2022թ. ժ.15:00-ին կազմակերպված հանրային քննարկումներին մասնակցելու համար դիմումներ են ներկայացրել հետևյալ անձինք՝</p> <p>1.Մարիետա Սարգսյան (17.02.2023թ. հ. Դ-20082-23 դիմում)</p> <p>2.Ռիմա Մխիթարյան (21.02.2023թ. Դ-21470-23 դիմում)</p> <p>Հանրային բաց լսումներ են կազմակերպվել նաև 12 վարչական շրջաններում, որոնց մասնակցել են ընդհանուր 132 քաղաքացի:</p>
<p>Հանրային քննարկումների մասնակցության արդյունքները</p>	<p>Հանրային քննարկումների հրավերներով սահմանված կարգով և ժամկետում նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների արդյունքում Նախագծերում փոփոխություններ չեն կատարվել:</p>

Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք կան)	Հանրային բաց լուսնների եղանակով կազմակերպված հանրային քննարկումների ընթացքում Նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, առարկությունների և հարցադրումների ընդունման կամ չընդունման վերաբերյալ կազմվել են տեղեկանք-ամփոփաթերթեր:
--	--

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**



ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ	Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն	Պարզաբանում/ եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4	5
1.	Ներկայացված առաջարկությունների և առարկությունների հիման վրա նախագծում փոփոխություն չի կատարվել	-	-	-

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ	Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն	Պարզաբանում/ եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4	5
1.	<p><b>Գրիգոր Ավետիսյան քաղաքացի (09.02.2023թ. առաջարկն ուղարկվել է <a href="mailto:zargacum@yerevan.am">zargacum@yerevan.am</a> էլ. հասցեի միջոցով</b></p>	<p>Բոլոր նոր ծրագրերի մասին առաջարկում եմ որպես առաջին նախապայման ընդունել շինարարական նորմատիվների պահպանման խստիվ վերահսկողությունը:</p> <p>Դավթաշեն առաջին թաղամասի թիվ 61 հասցեի նախագիծը և շինարարությունը իրականացվում են քաղաքաշինական նորմատիվների ակնհայտ խախտումներով, որի պատճառով տուժում են հարևան շենքերի բնակիչները, իսկ պատկան մարմինները պատասխան են տալու կառուցապատողին իրականացված ծախսերի փոխհատուցման մասով: Կառուցապատման խտություն, ինսուլյացիա, շինությունների միջև հեռավորություն, հասարակական իրազեկում,</p>	<p>Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշեն 1-ին թաղամաս հ.61 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման վերաբերյալ բարձրացված հարցերի կապակցությամբ հայտնում ենք, որ Երևան համայնքի կողմից կառուցապատող՝ «ՌԱՖԱՅԵԼ» ՍՊ ընկերությանը, 30.09.2021թ. տրամադրվել է հ.01/18-07/1-Գ-7713-872 նախագծման թույլտվությունը, այնուհետև՝ 29.09.2022թ., ՀՀ գործող կարգի շրջանակներում Երևան համայնքի կողմից համաձայնեցվել է հ.01/18-05/1-Դ-78620-1007 աշխատանքային նախագիծը և</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

		<p>աղմուկի և թրթռումների նորմատիվների պահպանություն և այլ նորմատիվներ: Կառուցենք մեր քաղաքը մարդավարի ու մարդավայել...</p>	<p>տրամադրվել հ.01/18-Դ-78620-1736 շինարարության թույլտվությունը, որի համար հիմք են հանդիսացել՝ «ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱ ԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության 25.11.2021թ. հ.21-472 և 28.03.2022թ. հ.22-106 փորձագիտական դրական եզրակացությունները, • ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 17.11.2021թ. հ.ՔՏՄ/09.2.1/15145-21 դրական եզրակացությունը, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 9-ի հ.58-Ա հրամանով ստեղծված պետական համալիր փորձաքննական հանձնաժողովի հ.178 եզրակացությունը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի կողմից նորմատիվատեխնիկական պահանջների պահպանման վերաբերյալ հարցեր չեն քննարկվում, փոխարենը հիմք են ընդունվում գերատեսչական և պետական</p>	
--	--	--	--	--

			<p>լիցենզավորում ունեցող մարմինների կողմից տրամադրված փորձագիտական դրական եզրակացությունները, ուստի բարձրացված հարցերը ենթական են մեկնաբանման վերջիններիս կողմից:</p> <p><b><i>(Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին)</i></b></p>	
--	--	--	---	--